

# ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈՒԿԻ ԵԿԵՂԵՑԻ

— Ատտիկանի լրագիրներում տպագրուած է Պապի բաց նամակը առ ծիրանաւոր Օրելիան, որով Պապը յայտնում է, թէ պապութեան աշխարհական իշխանութեան վերականգնումը օր ըստ օրէ աւելի և աւելի անհրաժեշտ է դառնում: Իտալական լրագիրներից շատերը այս նամակը Վուիրինալի դէմ մի նոր ցոյց ընդունեցին, այն ինչ Ֆրանսիական կղերական թերթերը բարոյական տեսակետից նայելով գործին, ասում են, թէ պապերը անդադար կը բողոքեն Հռոմից զրկուելու դէմ՝ սակայն այդ բողոքը չի կարող արգելք լինել Ատտիկանի և Վուիրինալի յարաբերութեանց բարեդրուելուն: Ապացոյց սորան այդ թերթերը առաջ են բերում այն, որ վերջերս Պապը թող է տուել կաթոլիկներին մասնակցել օրէնսդիր ժողովների անդամների ընտրութեանը: Ինչ էլ որ լինի, դժուար թէ այդ աշխարհակալ ձգտումները նպաստեն արքայական և պապական աթոռների յարաբերութեանց բարեւորմանը:

— Տարւոյս օգոստոսի վերջերին Աիննայում բացուեցաւ չորրորդ միջազգային հին կաթոլիկների համագումար ժողովը, որին ներկայ էին բազմաթիւ անձինք, թէ հոգևորական և թէ աշխարհական դասից, Ռուսիայից էլ կային մի քանի անձինք, ի միջի այլոց պալատի աւագ քահանայ Եանիշևը: Այս համաժողովի մէջ զլիաւորապէս եկեղեցեաց միութեան խնդրով զբաղուեցան:

— Մատուռի կաթոլիկ եպիսկոպոսը եկեղեցական բանադանքի է ենթարկել Սպանիայի ելեւմտից նախարարին հետեւեալ պատճառարանութեամբ: 1869 թուին յեղափոխութիւնից յետոյ Բոլէարեան կղզիների վերայ եղած եկեղեցական կալուածքները յարքունիս գրաւուեցան: Բայց կալուածքների կառավարութեան արտօնութիւնը մնաց հոգևորականների ձեռքը: Սոքա իւրեանց այդ արտօնութիւնը ի շարն գործ դնելով սկսել են անխնայաբար կողոպտել արքունի սեպհականութիւնը՝ բոլոր անտառները կտորել են և այլն: Այս լսելով ելեւմտից նախարարը կարգադրել է, որ խլեն հոգևորականների ձեռքից կալուածների կառավարութեան արտօնութիւնը: Մատուռի եպիսկոպոսը, որի թեմի մէջ են Բոլէարեան կղզիները, մի խիստ ոճով գրուած հեռագրով յանուն ելեւմտից նախարարի պահանջել է, որ այդ կարգադրութիւնը փոխուի: Բայց նախարարը նորան պատասխանել է, թէ նա կարող է բողոքել իւր կարգադրութեան դէմ՝ պետական խորհրդին, եթէ ինքը դժգոհ է այդ կարգադրութիւնից, Եպիսկոպոսը առանց բողոքելու մի

կոնդակ է արձակում, որով թէ ելեւմտից նախարարին, թէ Բոլէարեան կղզիների վերայ ծառայող բոլոր ելեւմտից նախարարութեան անտիճանաւորներին, նաև եկեղեցական նախկին տիրողներին և կապալառուներին մինչև իսկ սոցա ժառանգներին — բանադանքի է ենթարկում: Այս խնդիրը մեծ իրարանցումն է յառաջացրել Մադրիդի բարձր շըրջաններում և գործը հասել է Պապին, որի վճռին ամենքը անհամբեր սպասում են: —

Ռուս-Ֆրանսական դաշնակցութիւնը Ֆրանսիայում ամեն դասակարգի մէջ, առանց խտրութեան կուսակցական հայեաղքների, մեծ ցնծութեամբ և ոգևորութեամբ է ընդունուել: Մինչև անգամ կաթոլիկ կղերը չէ զերծ մնացել ընդհանուր հոսանքի ազդեցութիւնից: Շատ յաճախ կարելի է այժմ լսել Ֆրանսիայի եկեղեցիներում աղօթք վասն կենաց Թադաւոր Վայսեր և Ռուս ազգի, կաթոլիկ եպիսկոպոսներից ոմանք իւրեանց քարոզների և շրջաբերականների մէջ համեմատելով Ռուս ազգի ջերմանդութիւնը առ եկեղեցին և նորա կրօնասիրութիւնը՝ Ֆրանսիայում տիրող անհաւատութեան հետ, յորդորում են իւրեանց հօտին օրինակ վերցնել Ռուսներից, կաթոլիկ կղերից մի այսպիսի գովասանք այլադաւան ազգի մասին լսելը շատ տարօրինակ կթուէր զեւ շատ մօտ ժամանակներում, իսկ այժմ հետզհետէ ընդհանրանում է յարգանքը դէպի Ռուս եկեղեցին:

— Կիսի Գարրիէլ Արքեպիսկոպոսը ևս մեծ եռանդով աղօթքի հրաւիրելով իւր հօտը դաշնակից Ռուսաստանի համար, մի շատ օտարօտի ցանկութիւն է յայտնել՝ Պապի իշխանութիւնը տարածուած տեսնելու մինչև Գոնի և Բօսփորի ափերը:

— Աւստրիայի նախարարապետ Բադէնին գերմանական կուսակցութիւնը իւր դէմ էր զինել, յօգուտ սլաւոնական ազգերի զիջումներ անելով: Այս պատճառով Աիննայի պարլամենտի մէջ տեղի ունեցան մի շարք անկարգութիւններ և լուսեցան շատ անվայել վիրաւորական խօսքեր Բադէնիի հասցէին: Մինչև որ Բադէնին իւր պատիւը պահպանելու համար հասարակական կարծեաց առաջ, ստիպուած եղաւ մենամարտութեան հրաւիրել իւր հակառակորդներից մինին: Մենամարտութիւնը միայն թեթեւ վերքով վերջացաւ, բայց Բադէնիի ժողովրդականութիւնը դորանով շատ բարձրացաւ: մանաւանդ որ Պապը ներեց նորա յանցանքը, Վայսերն էլ չընդունեց նորա հրաժարականը: Այս առթիւ լըրագիրները առաջ են բերում Աւստրիացուց Յովսէփ Բ. Վայսեր կարծիքը մենամարտութեան մասին՝ երկու սպաների մենամարտութեան պատճառով: Գէպքը պատահել է 1771 թուին, Յովսէփ Բ. Վայսերը հրամայում է բանտարկել երկուսին էլ և ասում է, որ եթէ իւր սպաները պատուոյ վե-

րականգման համար մենամարտութիւնը միակ միջոցն են համարում: Ինքը պատրաստ է զրկուիլ իւր սպաների կիսից անգամ: Բայց և այսպէս նորա ըստ օրինի իւրեանց պատիժը կստանան:

— Գիտաւորութիւն կայ Աւստրիայում մի նոր Կարոլիակոս համալսարան քանալու այն տեսակետով, իբր թէ բոլոր եղած պետական համալսարանները հակաքրիստոնէական հիմունքների վերայ են հաստատուած: Հասարակութեան մէջ այս գաղափարի համար հետաքրքրութիւն և համակրութիւն զարթեցնելու նպատակով թոռուցիկ թերթեր են հրատարակուում աստուածաբանութեան պրոֆեսոր Ըէօպֆերի խմբագրութեամբ:

— Անգլիայի կաթոլիկները սեպտ. 13-ին տօնեցին Անգլիոյ Օգոստինոս կրօնաւորի ձեռքով տեղի ունեցած դարձի 1300 ամեայ յորեկանը: \* Նոյն երեկոյեան ծիրանաւոր Վոզան (Անգլիայի կաթոլիկ եկեղեցւոյ զլխաւոր կառավարիչը) մի ճառ ասաց ս. Օգոստինոսի մասին) որ մտքերի մեծ յուզումն է յառաջ բերել: Առհասարակ Վոզան իւր նախորդից աւելի է աշխատում անգլիացիների ուշադրութիւնը լարած պահել դէպի կաթոլիկութիւնը և այդ նպատակաւ գործ է գնում նոյն իսկ այնպիսի միջոցներ, ինչպէս օրինակ. ծիրանի հագած մանգալ փողոցներում: որպէս զի հաւատացեալները ծունկ խոնարհին և ուրիշները տեսնեն այդ:

— Փրանսիայում կաթոլիկութիւնից ելած մի խումբ քահանաներ միութիւն են հաստատել Հըռոլմէական եկեղեցւոյ մէջ վերանորոգութեան գաղափարները արծարծելու նպատակով և այդ նպատակի համար հրատարակում են. „Le Chrétien français“ (Քրիստոնեայ Փրանսիացի) վերնագրով երկշաբաթաթերթը: Առայժմ նորա գիտաւորութիւն չունին բողոքականութեան յարելու: Թէ և իրենց թերթի խմբագիրը Կալվինական եկեղեցւոց երէց է:

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ:

— Փրանսիական հանրապետութեան նախագահ Ֆէլիքս Փորը օգոստոսի 11-ին փոխադարձ այցելութեան եկաւ Թագաւոր Կայսեր և արքայազայել և սիրալիր ընդունելութիւն գտաւ Նոյնին Մեծութեանց կողմից: Այս մեծաշուք ընդունելութեանը և փառաւոր հանդէսներին մասնակցեց ոչ միայն Կրօնշտափ, Պետերհոֆի և Պետերբուր-

գի ազգաբնակիութիւնը: այլ և Ռուսիոյ ամենահեռաւոր անկիւններում և սրձադաճք գտաւ այս այցելութիւնը: Փորը ոչ միայն հիւր էր Օգոստափառ Ցան, այլ և ամբողջ Ռուսաստանի. Թէ Փրանսիայում և թէ Ռուսաստանում ամենքն էլ առանձին հետաքրքրութեամբ և մեծ համակրական ցոյցերով հետևում էին այս այցելութեանը: նախատեսելով սորա հետևանքները, Եւ արգարեւ այս այցելութիւնը վերջնականապէս կնքեց երկու մեծ և հզօր պետութեանց և ազդաց բարեկամական յարաբերութիւնները և յայտնի եղաւ ամենեցուն, որ գաշնակցական միութիւն է ստորագրուել երկուսի մէջ և այդ գաշնակցութիւնը լոկ խաղաղութիւնը Եւրոպայում պահպանելու համար է և զուգակշիռ է եռապետութեան գաշնակցութեանը: Աւստի և այժմ կարելի է միանգամայն ապահով լինել, որ թէ եռապետական գաշնակցից պետութիւնները և թէ երկպետական այս գաշնակցութիւնը ձեռք ձեռքի տուած կը գործեն և խաղաղութեան գործը պսակուած կը լինի բոլորի խաղաղասիրական ընթացքով: Խաղաղութեան գործի ապահովութիւնը ապահովութիւն է քաղաքակիրթ ազդաց յառաջագիժութեան և մրցման գիտութեան և արուեստից բարգաւաճման ասպարիզում: իսկ մեծաքանակ զօրքերը միայն արթուն պահպան կը մնան հակելու: որ ոչ զք չհամարձակի խանդարել միւսի խաղաղ յառաջագիժմական քայլերին:

— Թագաւոր Կայսեր, Թագուհի Կայսրուհւոյ և Օգոստափառ Գստերց այցելութիւնը Վարշաւա քաղաքը հոգեղմայլ ազդեցութիւն արեց ամբողջ տեղական ազգաբնակիութեան վերայ: որ պատրաստեց Նոյնին Մեծութեանց համար շքեղ և փառաւոր ընդունելութիւն: Այս բարձր այցելութեամբ արքայական ընտանիքը ցոյց տուեց, որ լինացիք այսուհետև սիրեցեալ Կայսեր կողմից արժանացել են կատարեալ ներման իւրեանց անցեալի համար և կարող են իւրեանց հաւատարիմ հպատակութեամբ Ռուսիոյ լայնածաւալ պետութեան մէջ ապրել և վայելել օրինաց շնորհները: Ամեն գասակարգի լինացիք՝ հին ազնուական ցեղերից սկսած մինչև ստորինը ջերմ համակրանաց ցոյցերով և ցնծութեամբ էին ողջունում Նոյնին Մեծութեանց, որ ապացոյց էր թէ Նոցա ուրախութիւնը բոլորում էր սրտի խորքերից: Երկար տարիներ կասկածանաց տակ եղած ժողովուրդի ուսերից մի ծանր բեռն իջաւ: նա տեսաւ, որ Սիրեցեալ թագաւորի տեսութիւնից չէ վրիպել Ահհ ազգի հաւատարմութիւնը և նոր կեանքի է հրաւիրում նորան: Այս հրաւերը Ռուսաց հզօր Գահի բարձունքից արձագանք գտաւ ամեն մի լինացւոյ մէջ և այժմ լինել կատարեալ հաւատով և մեծ յոյսով կարող է շարունակել իւր յառաջագիժմութեան գործը յօգուտ մի ընդհանուր հայրենիքի—Մեծին Ռուսիոյ:

\* Անգլիայում բիսուսկոսներ կային նաև Օգոստինոսից առաջ: Բայց անկախ կարոլիկ եկեղեցւոյ: Օգոստինոսը բոլոր եկեղեցիներումնայլ բիսուսկոսներն ևս նախ: միջուկն ժամանակ կիսով որեց նախկին բիսուսկոսների նպատակներն չնորմի նպատակաւ:

Իշխովում Ռուսաց խարխուղ եկեղեցւոյ փոխարէն նոր եկեղեցի է կառուցուելու, որի հիմնարկութեան հանդէսը կատարուեցաւ սեպտեմբերի 22-ին: Ռուսները թիւը Գալիցիայում ընդ ամենը 1500 հոգի է, իսկ Իշխովում միայն 106: Սորա շրջագատուած լինելով մոլորաճող կաթոլիկ ազգաբնակչութեամբ, բնականաբար շատ նեղ և հալածուած վիճակի մէջ պէտք է ապրէին: ուստի և նոցա խնդիրները՝ իւրեանց համար մի յարմարաւոր եկեղեցի ունենալու մասին, պէտք է գիմազրութեան հանդիպէր կաթոլիկ հասարակութեան կողմից: Զարմանալին այն է, որ Աւստրիական կառավարութիւնն էլ երկար ժամանակ ձգձգում էր գործը և հազիւ հազ վերջին օրերս յաջողուեցաւ թողաուելութիւն ստանալ կառավարութիւնից և մեծ հանդիսով կատարուեցաւ հիմնարկութեան հանդէսը:

ՆԵՂԵՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

— Աւերջապէս հեռագիրը հաղորդեց, որ ամսոյս 6-ին Տաճկաստանի և Յունաստանի մէջ խաղաղութեան դաշն կապիլու խնդրի սկզբնական պայմանները ընդունուեցան և վերջնական խաղաղութիւնն էլ կարճ ժամանակում կը վերականգնի: Հազիւ յաջողուեցաւ մեծ պիտութիւններին յաղթել մեծամեծ արգելքներին և ալատել քրիստոնեայ Յունաստանը յաղթող Տաճկաստանի շափաղանց ձգտումներից, Քերմանիայի պաշտպանութեան վերայ յուսալով Տաճկաստանը սպասածից աւելի ընդդիմութիւն ցոյց տուեց, բայց շնորհիւ Ռուսոյն և Քրմանիայի ներդաշնակ քաղաքականութեան և հըզոր աղջեցութեան, Յունաստանը ազատուեցաւ մեծ վտանգից և Թէսալիան փրկուեցաւ նորից Տաճկաց ձեռքը ընկնելու փորձաքից: Միայն սաղմագիտական կարևոր փոփոխութիւններ եղան սահմանի վերայ և շորս միլլիօն օսմանեան սակի տուգանքի ենթարկուեցաւ Յունաստանը: Թէև այս սրայմանները վաղուց ընդունուած էին, սակայն դրժուարութեան հանդիպեցաւ այն հարցը, թէ երբ պէտք է հեռանան Տաճկաց զօրքերը Թէսալիայից — տուգանքը կամ նորա մի մասը վճարելուց թէ պայմանը ստորագրելուց անմիջապէս յետոյ, Այս խնդրում Անգլիան սինգեց, որ անմիջապէս հեռանան Տաճկաց զօրքերը, իսկ Քերմանիան հակառակում էր, Ի վերջոյ շնորհիւ Իտալիոյ Հուճերտ թագաւորի միջնորդութեանը Քերմանիան զիջաւ և խաղաղութեան գործը իւր ցանկալի վախճանին հանգաւ: Միայն Յունաստանի կլեմտից վերայ որոշուեցաւ Աւրոպական հսկող մի մասնաժողով կարգել, որպէս զի թէ պատերազմական տուգանքի խնդիրը և թէ Յունաստանի այլ պարտատէրների պահանջները չընդհատուին, այլ ընդհանուրի շահերի հա-

մանայն կառավարութի արբունի զանձարանի ելուժուարը:

ՍԵՐԲԻԱՅԸ Ե ԿԵՂԵՑԻ

Արարատի ընթերցողներին յայտնի է, որ Կ. Պօլսոյ Յունաց պատրիարքը Իսկուրի մետրոպոլիտ նշանակելու խնդրում փոխանակ Սերբիացի հոգևորականներից ընտրելու՝ Յոյն — մետրոպոլիտ էր կարգել, Այս խնդիրը մեծ իրարանցումն պատճառեց ժամանակին և Սերբիայի ու Յունաց պատրիարքի մէջ սառնութիւն տիրեց, որ կարող էր վերջանալ Իսկուրի պատրիարքութեան վերականգնումով, որով Սերբիական եկեղեցին, նման բողոքական եկեղեցւոյ, կ'անջատուէր ընդհանուր օրթոդոքս եկեղեցուց ըստ վարչականին: Յունաց պատրիարքը, շնայելով իւր տիեզերական կոչմանը, միշտ Յունաց շահերն է պաշտպանել և միւս օրթոդոքս ազգերին ճնշելու է ձգտել: Բայց այս անգամ, թէ և երկար ընդդիմութիւնից յետոյ, սակայն վերջ ի վերջոյ Յունաց պատրիարքը զիջաւ և Քիրմիլեան վարդապետին, որ ազգով Սերբ է, կարգեց Իսկուրի մետրոպոլիտի պաշտօնակատար և կարճ ժամանակում անշուշտ կը հաստատէ նորան իւր պաշտօնի մէջ: Սերբիական կառավարութեան այս յաղթանակը Մակեդոնիայում մեծ ոգևորութեամբ ընդունուեցաւ օրթոդոքս եկեղեցուն պատկանող բոլոր աղգութիւնների կողմից, որոնք իւրեանց ինքնուրոյն եկեղեցական կիանքը պահպանելու տենչով են ապրում և ցանկանում են միևնոյն ժամանակ մի ընդհանուր միութեան կապ պահել միմեանց հետ ընդ հոգևոր իշխանութեամբ: Կ. Պօլսոյ տիեզերական պատրիարքի, Այս յաղթանակը տանելուն շատ նպաստեց Ռուսաց ղեկավանը, որ Սերբիացուց արգար պահանջի իւր հզոր պաշտպանութեամբ ընկճեց Յունաց պատրիարքի յունամոլ ձգտումները:

Ախննայում Սերբերը երեք տարի սորանից առաջ միայն կարողացել են կառուցանել մի եկեղեցի և կաղմելով առանձին եկեղեցական համայնք, զիմել են Աւստրիական կառավարութեան խնդրելով Բալմաստիայի թեմակալի իշխանութեանը ենթարկել իւրեանց, Աւերջին ժամանակ կառավարութիւնը յարգեց այդ միջնորդութիւնը և այդ առթիւ Սրբազան Կիկոզիմը այցելեց իւր նոր հօտը Խաչվերացի Տօնին, Ս. Պատարագ մատուցանելով Սերբական եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան խուռն բաղմութեան աղթաւորների, Սրբազանը մի իմաստալից քարոզով յորդորեց իւր նոր հօտը խաղաղասէր և համերաշխ լինել և սիրել միմեանց, Ի պատիւ Սրբազանի մի մեծ երեկոյթ տրուեցաւ Սերբերի կողմից: Քրանց — Յովսէփ կայսրը առանձին ունկնդրութեան արժանացրեց նորան, Սրբազան Կի-

կողմը 54 տարեկան է և յայտնի է իբրև նշանա-  
ւոր գիտնական և հեղինակ բազմաթիւ երկասիրու-  
թեանց, ի միջի որոց շատ հաշակ է ստացել եկե-  
ղեցական իրաւագիտութեան վերաբերեալ գիւրքը:

ԲՈՂԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ:

— Բողոքական կառավարութիւնը նախաձեռ-  
նութիւն է առել եկեղեցական տուժարը փոխելու՝  
Յուլեան հին տուժարի փոխարէն Գրիգորեան նոր  
տուժարը ընդունելու մասին: Այս խնդիրը շատ  
նշանաւոր խնդիր է ամբողջ օրթողոքս եկեղեցւոյ  
համար, ուստի և այսպիսի եկեղեցական մեծ գոր-  
ծի նախաձեռնութիւնը բնականաբար Ռուսիոյ Ս.  
Սիւսոյի կողմից էր սպասելի, քան փոքրիկ Բողա-  
րիայի, Բայց և այնպէս իրողութիւնն այն է, որ  
Բողաբիայի նախագահ Ստոյլիովը արգէն պատրաս-  
տել է մի ծրագիր, որով առաջիկայ 1898 թ.-ի  
փետրուարի 2-ից յետոյ հետեւեալ օրը պէտք է  
հաշուեն փոխանակ ամսի 3-ի ուղղակի 15:

ԲՈՂԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ:

— Յիսուս հազար ստորագրութեամբ գերմանացի  
մայրերը մի խնդիր են ներկայացրել գերմանական  
համալսարանների պրոֆէսորներին, որով նոքա  
յայտնում են թէ զաստիարակները ոչ մի ուշա-  
գրութիւն չեն դարձնում երիտասարդութեան բա-  
րոյականութեան վերայ: Մայրերը սարսափով տես-  
նում են, որ իւրեանց երեխաները բոլորովին փո-  
խուում են զպրոց մանկուց յետոյ, «Մենք» ա-  
սում են նոքա իւրեանց աչքում ոչ մի նշանակու-  
թիւն չունինք, մեր խորհուրդները, խրատները,  
աղաչանքները ընդգիմութեան են հանդիպում զաս-  
տիարակների կողմից: Ո՞րն է ճշմարտութիւնը, ո՞րն  
է լաւը՝ պատանին չի զանազանում և հրապու-  
րուում է միայն նորանով ինչ որ գուրեկան է՝ ա-  
ռանց հետեւանքի մասին մտածելու: Մենք գանգա-  
տուում ենք ձեզանից, շարունակում են նոքա,  
պ. պ. պրոֆէսորները, որ դուք ձեր անձնական  
փորձերի վերայ հիմնուելով և ուսանողական աւան-  
դութիւններին հաւատարիմ մնալով, քարոզում էք,  
թէ ամեն մի հրապուր և այլ և այլ խրախոսանքներ  
անխուսափելի են ուսանողի համար: Այդպիսի  
մտքերը, մանաւանդ մեր հասարակական կեանքի  
ներկայ դրութեան ժամանակ, կորստարներ են մեր  
որդւոց համար և մենք բողոքում ենք այն զաս-  
տիարակների դէմ, որոնք հաւատացնում են, թէ  
վարքի ապականութիւնը մի անհրաժեշտ շարժք է  
երիտասարդութեան համար, Հազարաւոր փորձեր և  
հարիւրաւոր իմաստուններ հակառակն են ասում:  
զեղև կեանքը երիտասարդութեան ժամանակ թու-

լացնում է մարդու կազմուածքը և ապազայում  
ընտանիքների մէջ շատ ծանր հիւանդութիւնների  
աղբիւր է գտնում և վարակում կանանց, երե-  
խաներին և ժառանգարար սերունդէ սերունդ է  
անցնում: Մենք այդ չենք ցանկանում և աղաչում  
ենք՝ օգնեցէք մեզ, ասելով վերջացնում են նոքա  
իւրեանց խօսքը, որ մեծ համակրանաց արժանի է:

— Մի այլ նոյնպէս համակրութեան արժանի  
գործ է սկսուել զարձակ կանանց կեանքով և այս  
անգամ ոչ միայն Գերմանիայում, այլ և Ֆրանսիա-  
յում: այդ գործը յօգուտ խաղաղութեան կզած  
շարժումն է, որի ձեռներեցութիւնը առել է Գեր-  
մանիայում տիկին Բերտա Ջուսնէրը: Սորա հրա-  
տարակած Die Waffen nieder անուն ամսագրութում  
սոցադրուած է Ֆրանսիացի կանանց կոչը առ Գերմա-  
նացի կանայս և նոցա պատասխանը: Երկու կոչերն  
էլ խաղաղութեան խնդիրն են վերաբերում և խիտ  
ընթացեալ ոգևորութեամբ հրաւիրում են միմեանց ա-  
մեն ջանք ի գործ դնել ընդհանուր խաղաղութեան  
գործը յաջողեցնելու համար:

Գերմանիա:

Պետրոս Կանոզայի յորելեանի առթիւ պապի  
հրատարակած կոնդակը մեծ զայրոյթ է յառջ բե-  
րել բողոքական Գերմանիայում և այդ զայրոյթը  
իւր պաշտօնական արտայայտութիւնն է գտել մի  
քանի մեծ եկեղեցական ժողովներում: Այդ ժո-  
ղովներից ամենակարեւորն էր Գուստաւ-Աղուլֆ  
ընկերութեան տարեկան գումարումը, որ տեղի ու-  
նեցաւ 28-30 սեպտ. (Ն. տ.) Բերլինում, և  
50-րդ-ը լինելով այդ նշանաւոր, բողոքական եկե-  
ղեցւոյ շահերը պապականութեան դէմ պաշտպանող,  
ընկերութեան հաստատութեան օրից՝ \* յորելեանի  
բնաւորութիւն ունէր: Ներկայ էր ի միջի այլոց  
նաև պրուսական կոնսիստորիայի նախագահ Բարկհա-  
ուզէն (կայսրն ևս ունէր իւր ներկայացուցիչը յան-  
ձին մեծ իշխան Ալբրեխտի), որ ասել է բողոքա-  
կան Գերմանիոյ եկեղեցական գործերի մէջ գրեթէ  
ամենից աւելի մեծ ձայն ունեցող անձը, և ուրիշ-  
ների հետ մէկ տեղ բարձրացրեց իւր ազդեցիկ  
ձայնը բողոքելու պապի կոնդակի դէմ: Մեկ չի  
կարող վիրաւորել, ասաց նա, երբ անդրադառնա  
մտրուող անսխալախմուրթները գահի վրայից, ինչպէս այս  
մօտ օրերս, ծանր անարգանք է շարժում մեր թան-  
կազին աւետարանական եկեղեցւոյ և առանձնապէս  
կրօնական վերանորոգութեան հերոսի դէմ, որի գոր-  
ծը ոչ թէ թոյն, այլ զուտ աղ է եղել, որ հեռու  
աւետարանական եկեղեցւոյ սահմաններից իսկ  
գուրս, իւր փրկարար ազդեցութիւնը գործել է:—  
Պահպանենք բոլոր այդ յարձակումների դէմ այն

\* Տես «Արարես» 1897. Օգոստ. կր. 343:

կորովն ու վստահութիւնը, որ աւետարանական հաւատն է ներշնչում: արիւարար հաստատուն մընանք այն գրօշակին, որով Լուստեր և իւր գործակիցները հաւատոյ կուռի մէջ մեզ առաջնորդել են: Այդ գրօշակը երբէք խռովութեան գրօշակ չէ: այլ նշանարան այն արդարութեան, որ միայն հաւատով ընդունած աստուածային շնորհքը տալիս է. և այդ արդարութեան քարոզը, ինչպէս դարեր առաջ ծանր մոլորութեան կապանքներից աշխարհն աղատել է: այժմ ևս մեղքի տակ ճնշուած մարդկութեան անհանգիստ խիղճը խաղաղացնելու և մեղաց թողութիւնն ու յաւիտեանականութեան յոյս ներշնչելու միակ միջոցն է: Քանի մանաւանդ աւելի ամբարտաւան և խռովայոյզ կերպով մեր օրերում դարձը դէպի խղճի ստրկութիւն, որ շատ ազնիւ ազգերի կորստեան պատճառ է եղել, գովարանում է կրկին իբրև միակ փրկարար միջոց ազգերի բոլոր չարիքների դէմ: նոյնքան աւելի վստահ արտայայտութիւն թող ունենայ մեր հաստատուն և անշարժ դառնութիւնը, թէ աւետարանից և միայն աւետարանից է հոսում այն կենդանի ջրոյ աղբիւրը, որ մեր գերմանական ազգի առողջութեան, փրկութեան և ապագայի գրաւականն է:

Պապի այն մեղադրանքի դէմ, թէ կրօն. վերանորոգութիւնը նպաստել է բարոյականութեան չափից դուրս ընկնելուն, զանազան թերթեր ստատիստիքական տեղեկութիւններ են ներկայացնում, որոնցից երևում է, թէ Գերմանիոյ կաթոլիկ ազգաբնակչութեան մէջ համեմատաբար շատ աւելի է զարգացած, քան բողոքականների մէջ: 1882—1891 թ. օրինակ 100,000 հոգի բողոքականների վերայ 963 յանցանք և ոճրագործութիւն է գալիս, նոյն թուով կաթոլիկների վերայ 1153: Աւրիշ երկրներում տարրերութիւնն աւելի է աչքի ընկնում: մանաւանդ բուն կաթոլիկական երկրներում: ինչպէս Իտալիա, Ապանիա, Բելգիա, Ֆրանսիա:

Գոտսաւ—Աղոյժ ընկերութեան ընդհանուր հաշուից երևում է, որ նորա ճիւղերի թիւը եղել է վերջին տարին 1862 (13-ով աւելի նախընթաց տարուանից. սոցա թուում 549 կանանց ընկերութիւններ), Ընդհանուր եկամուտ եղել է 2,198,104 մարկ, որից ծախք 1,254,998 մարկ, Ընկերութիւնը օրհնել է այս տարի իւր օգնութեամբ կառուցած 32 նոր եկեղեցիներ և աղօթատներ, օժանդակութիւն է հասցրել 1870 ազքառ համայնքների, Ընկերութեան հիմնուելու օրից 4457 համայնքներ 31,820,945 մարկ նպաստ են ստացել, շինուել կամ նորոգուել են 1905 եկեղեցիներ ու աղօթատներ, 813 դպրոցական շէնքեր, 753 բնակարաններ եկեղեցւոյ պաշտօնեանների համար:

20—22 սեպտ. (ն. տ.) տեղի ունեցաւ Համբուրգում Գերմանիոյ բարոյականութեան պաշտպան ընկերութիւնների ընդհանուր խորհուրդը: Այս ընկերութիւնների գլխաւոր քանքն ուղղուած է այն վնասակար ազգեցութեան դէմ, որ զանազան մութ անձինք և խմբեր, փող վստահելու նպատակով, գրի, խօսքի, թատերական զանազան տեսակ ներկայացումների, անբարոյական խաղերի և ձեռնարկութեանց միջոցաւ գործ են դնում հասարակութեան ընդարձակ խաւերի վերայ: Բնական է, որ նոցա գործը բնական մարդու ամենաթոյլ կողմերը շոյող զօրութիւնների դէմ լինելով, մի այնպիսի ժամանակ, երբ ոչինչ անբարոյական չի համարուում, ինչ որ բնական է՝ բնական նաև մարդու անասնական բնութեան համար, մեծամեծ խօշընդոտների պէտք է հանդիպի և շատ անգամ՝ ծաղրի ու թըշնամանքի առարկայ լինի: Ասկայն նոքա չեն վհատում և նոցա յաջողութիւնը տարէ ցտարի, թէ և ոչ փայլուն, բայց զգալի կերպով աւելանում է: Անցեալ տարի ևս յաջողել է նոցա մի քանի կրտուկ ոստիկանական կորպուզութիւններ յառաջ բերել թատրոնական կասկածելի գրուածների և այլ անբարոյական գրքերի դէմ:

Նոր ևնսակ միսիոն ձապոնիայում.—Մեր՝ տարօրինակութիւններով յայտնի դարի մէջ, աչքի ընկնող մի տարօրինակութիւնն է նաև քաղաքակրթուած քրիստոնեանների հեթանոսական կրօն ընդունելը: Այդպիսի մի դէպք տեղի ունեցաւ նորբը ձապոնիայում: Այստեղ 100,000-ից աւելի քրիստոնէութիւն ընդունող ձապոնացիներ կային մինչև այժմ, բայց ոչ մի օրինակ չկար, որ քրիստոնեայն ձապոնական կրօն ընդունէր: Առաջին օրինակը տուին երեք ամերիկացիներ և մի գերմանացի իրենց ընտանիքներով, ընդամենը 25 հոգի, որոնք երդում արին. Վաուսիօյի Օ-իաշիբո շինտոյական (կրօնի) տաճարին ամբողջ սրտով հաւատարիմ լինել մինչև մահ և նորա պատուէրներին կատարեալ կերպով հնազանդ լինել:

Ի դէպ կարելի է յիշել որ վերջին ժամանակ Փարիզում տեղի ունեցած Արևելագիտելի մոդուլ վերջացաւ բուդապայական կրօնի մի արարողութեամբ, որին 200 հոգի մասնակցում էին, հարկաւ աւելի հետաքրքիր հանդիսատեսներ, քան ջերմեանդ հաւատացողներ:

